## ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԱԿՏԸ

Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ Հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան յայտարարում է, որ այսօրւանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբրեւ անկախ պետական միութիւն:

Ուղիղ մի տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրւած Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն Անդրկովկասեան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ քաղաքական ակտի մասին պաշտօնապէս Պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ՝ այս մի տարւայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գաւառներում:

1919 թ. փետրւար ամսին Երեւան քաղաքում կայացած Արեւմտահայ երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանի միացեալ եւ անկախ է ճանաչում:

Այժմ, Անդրկովկասում եւ Օսմանեան կայսրութեան սահմաններում գտնւած պապենական հայկական երկրների միացման եւ անկախութեան այս ակտը կատարելով՝ Հայաստանի Կառավարութիւնը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական ձեւն է Ռամկավար Հանրապետութիւն եւ որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը:

Այդպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն տէրն ու տնօրէնը, եւ Հայաստանի Պարլամենտն ու Կառավարութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագոյն օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնը:

Հայաստանի Կառավարութիւնը սոյն ակտը հրատարակում է 1919 թ. Ապրիլի 27-ի Պարլամենտի որոշմամբ Կառավարութեանը տրւած յատուկ լիազօրութիւնների հիման վրայ:

*1919 թ Մայիսի 28ին Երեւան քաղաք*

*...Երեւի այսօր - քանի՜ դար հետո-*
*Երկինք ու երկիր հաշտվեցին նորից...*
*...Երեւի այսօր - քանի՜ դար հետո-*
*«Հայաստան» բառից պոկվեցին-ընկան*
*«Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...*

**Պարույր Սեւակ**

# ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 1919 Թ. ՄԱՅԻՍԻ 28-Ի ԱԿՏԸ

## պատմություն եւ արդիականություն

**Գիտաժողով**

**24 մայիսի 2019 թ.**

# ՀՐԱՎԵՐ

Երեւան 2019

Հարգելի ____________________

____________________

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու

# ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 1919 Թ. ՄԱՅԻՍԻ 28-Ի ԱԿՏԸ

**պատմություն եւ արդիականություն**

գիտաժողովին, որը տեղի կունենա 2019 թ.
մայիսի 24-ին
Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային ակադեմիայի
նախագահության նիստերի կլոր դահլիճում՝
Բաղրամյան 24

## Գիտաժողովի բացումը՝

2019 թ. մայիսի 24-ին,
ժամը 10:00-ին

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Մուտքն ազատ է
Զեկուցումների տևողությունը՝ մինչև 20 րոպե

Հայ Յեղափոխական Դաշնակցություն
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

# ԾՐԱԳԻՐ

Մասնակիցների գրանցում՝ մայիսի 24, 9.30-10.00
Գիտաժողովի բացում՝ 10.00 - 10.30
Բացման խոսք՝ գիտաժողովի կազմկոմիտե
Ողջույնի խոսքեր՝ ՀՅԴ Բյուրո
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Նիստ առաջին 10:30-12:00

## ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1920 ԹԹ.

*Նախագահող՝ Ալբերտ Ա. Ստեփանյան*
*պ. գ. դ.*

### ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

1. **Գևորգ Խուդինյան**, «Վէմ» հանդեսի խմբագիր, պ. գ. դ.
   Ազգի ու հայրենիքի միասնության հարացույցի փնտրտուքը՝ Միջնադարում եւ Նոր ժամանակներում
2. **Կարեն Հայրապետյան**, պ. գ. թ., Վ. Բրյուսովի անվ. Լեզվաբանական համալսարան
   Հատվածականության համախտանիշը 20-րդ դարասկզբի հայ իրականության մեջ եւ նրա հաղթահարման՝ ՀՀ իշխանությունների քաղաքականությունը
3. **Արարատ Հակոբյան**, պ. գ. դ., Հայաստանի Պետական Տնտեսագիտական համալսարան
   Միացյալ Հայաստանի անկախության մասին պետական ակտի ընդունման գործընթացը 1919 թ.

Հարց ու պատասխան 11.30 – 12.00
Սուրճի ընդմիջում 12.00 – 12.30

Նիստ երկրորդ 12.30-14.00

## ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ

*Նախագահող՝ Գևորգ Խուդինյան*
*«Վէմ» հանդեսի խմբագիր, պ. գ. դ.*

### ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

4. **Արմեն Մարուքյան**, պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
   Սեւրի պայմանագիրն ու Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը՝ Միացյալ եւ Անկախ Հայաստանի ակտի իրականացման սկիզբ
5. **Լիլիթ Հովհաննիսյան**, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
   Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի արտացոլումը ԱՄՆ Պետդեպարտամենտի 1917-1920 թթ. փաստաթղթերում
6. **Տարոն Հակոբյան**, պ. գ. թ., Ստեփանակերտ
   Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձեւավորումը որպես նոր մեկնակետ՝ Միացյալ Հայաստանի ճանապարհին

Քննարկում 14.00 – 15.00